



ք. Երևան, 17.08.16 թ.
Ելք № 034

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

պրն. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովսեփյան

Հայտնում ենք Ձեզ, որ «Հարկ վճարողների պաշտպանություն» հասարակական կազմակերպությունը հարկ վճարողներից ստանում է բազմաթիվ առաջարկներ՝ ինչպես հարկային օրենսդրության կիրառման ընթացքում առաջ եկած խնդիրների վերաբերյալ, այնպես էլ հարկային մարմնի գործառույթներին ուղղակիորեն չվերաբերող հարցերի վերաբերյալ: Վերջերս ստացված առաջարկներից մեկը վերաբերում է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ք. Երևան, Մովսես Խորենացու 7 հասցեում գտնվող «Էլեկտրոնային ծառայությունների կենտրոն»-ում ջրի սարքավորման բացակայությանը: Նման սարքի անհրաժեշտությունը հատկապես արդիական է դառնում ամռան ամիսներին, հատկապես շոգ եղանակների ժամանակահատվածում:

«Հարկ վճարողների պաշտպանություն» հասարակական կազմակերպությունը ցանկանում է «Էլեկտրոնային ծառայությունների կենտրոն»-ին տրամադրել ջրի սարքավորում, որից կարող են օգտվել հարկ վճարողները՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից նման համաձայնության դեպքում: Հասարակական կազմակերպության կողմից նման սարքավորման տրամադրումը իրականացվելու է հարկ վճարողների կողմից կազմակերպությանը տրամադրված անհատույց միջոցների հաշվին:

Միաժամանակ, հարկային մարմնի կողմից համաձայնության դեպքում, խնդրում ենք պարզաբանել հասարակական կազմակերպության կողմից նման սարքավորման տրամադրման դեպքում հարկային պարտավորությունների հնարավոր առաջացման, ինչպես նաև հաշվարկային փաստաթղթերի (այդ թվում՝ էլեկտրոնային կարգով դուրս գրվող փաստաթղթերի) դուրս գրման անհրաժեշտության մասին: Խնդրում ենք հաշվի առնել, որ սարքավորումից օգտվելու են նաև հարկ վճարողները:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան